Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկայի (26 դասաժամ), տեխնոլոգիայի (տղաների խումբ, 6 դասաժամ), բնագիտության (10 դասաժամ), մաթեմատիկայի (22 դասաժամ), քիմիայի (13 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավորև բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստացված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձև 1)

2. Փաստաթուղթ /դիպլոմ/ <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի առաջին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ:

3. Անձնագրի պատճենը:

4. Ինքնակենսագրություն (Ձև 4):

5.Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6.Մեկ լուսանկար 3x4 չափի,

7.Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են նաև զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են նոյմբերի 15-ից նոյեմբերի 28-ը ներառյալ, ամեն օր ժամը 10.00-15.00, բացի շաբաթ և կիրակի և տոն օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2023 թ. դեկտեմբերի 1-ին ժամը 14.00-ին Քաջարանի թիվ 1 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ք. Քաջարան Խանջյան 7:

Տեղեկությունների համար զանգահարել /0285/ 3-21-09 հեռախոսահամարով: